ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Նելլի Կիրակոսյան Արամայիսի ԱՁ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/162 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Պատրաստված է թուջե ձուլվածքից և երկաթից: Հիմքը՝ (Նկար 1, 1.1) թուջե ձուլվածք, բարձրությունը՝ 800մմ, որի մեջ ամրանում է Փ102մմ խողովակ՝ 3մմ պատի հաստությամբ: Ընդհանուր բարձրությունը (Նկար 1 , 1.2.) 4 թևի դեպքում 3530մմ: 2200մմ բարձրության վրա թուջե ձուլվածք՝ (Նկար 1, 1.3.) 150x150x150մմ քառանկյուն խորանարդ, որի վրա ամրանում է Երևանի զինանշանը Փ90մմ տրամագծով: Ցուցանակի թևերի երկարությունը (Նկար 1, 1.4.) 950մմ և 700մմ՝ ըստ գնորդի պահանջի: Ցուցանակի թևերի լայնությունը 220մմ: Ցուցանակի թևերի եզրերը պետք է լինի քառանկյուն խողովակով պատրաստված շրջանակից՝ 15x15մմ մետաղական խողովակով: Ցուցանակի թևերը հավաքվում են Փ89մմ մետաղական խողովակի վրա և թևերի միջև հեռավորությունը պետք է լինի 5-15մմ: Վերևի հատվածում նույնպես 150x150x150մմ քառանկյուն խորանարդ (Նկար 1, 1.5.), որի վրա ամրանում է Երևանի զինանշանը՝ Փ90մմ տրամագծով և (Նկար 1, 1.6.) թուջե գագաթ 150մմ բարձրությամբ: Ցուցանակի յուրաքանչյուր թև պետք է պտտվի 360 աստիճանով Փ89մմ խողովակի առանցքի շուրջ և ամրանա ցանկացած դիրքում: Ցուցանակի թևերը (Նկար 3, 2.1.) Փ89մմ խողովակի վրա հագնում է թուջե ուղղորդիչով ((втулка) Նկար 3, 2.2.) ՝ թևի ուղղահայացությունը ապահովելու համար: Թևի թիթեղի հաստությունը 1.5մմ: Թևերի գրվածքի տառատեսակը (Նկար 3, 2.3.) Dallak Time և Dallak Time Armenia: Գրվածքը պետք է լինի Հայերեն և Անգլերեն՝ միաժամանակ յուրաքանչյուր կողմում, վերևից՝ Հայերեն, իսկ ներքևում՝ Անգլերեն: Գրվածքը պատրաստվում է ինքնակպչուն թաղանթի վրա՝ տպագրության միջոցով (գունային համադրությունը՝ ըստ գնորդի պահանջի) և պետք է լինի դիմացկուն եղանակային պայմաններին: Ցուցանակի հետ պատրաստվում է նաև

	մետաղական կոնստրուկցիա (գծագիր) (закладной) բետոնացման համար, որի վրա ամրանում է ցուցանակը: Ցուցանակի թուջե հիմքը և բոլոր դետալները պետք է համապատասխանի նկարում պատկերվածի հետ: Ցուցանակը պետք է պատրաստվի նոր հումքով և փոշեներկված՝ համաձայնեցնելով գնորդի հետ: Ցուցանակների տեղափոխումը և տեղադրումը, ըստ գնորդի կողմից ներկայացված հասցեների, կատարում է մատակարարը՝ առավելագույնը 21 օրացուցային օրվա ընթացքում, տեղադրելով նվազագույնը 15 հատ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Նելլի Կիրակոսյան Արամայիսի ԱՁ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/162 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	